

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Դէյսովիտները Ստատսկի Սօվետիկ ՍԵՖԱՆ ՊԱՆԼՕՎԻՉ ԳԱՄԲԱՐՕՎ, իր գաւազաններով, յայտնելով իր կնոջ ՆԻՆԱ ՍՕԼՕՄՈՆՕՎՆԱ ԳԱՄԲԱՐՕՎԱՅԻ մահվան մասին, խնդրում է ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկաւորութեան հանդիսին իր սեփական տնից, լաբորատորնայա փողոցում, դէպի Գամպեյնց Սուրբ Գեորգ եկեղեցին, որը գտնվում է Գլորցովայա փողոցում, այսօր, հինգշաբթի, հոկտեմբերի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին:

1—1

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առևտրական ուսումնարանի կողմից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջազգային կոնգրես. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԿԱՆ. Էվելինա.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԵԻՏԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Լուսաւորված աղբերը վաղուց ի վեր հասկացել են, որ մէկ երկրի վաճառականութիւնը, առևտուրը կանոնաւոր կերպով զարգացնելու համար անհրաժեշտ է, որ վաճառականը լինի զարգացած մարդ, ունենայ բազմակողմանի գիտութիւններ: Զարգացած, լուսաւորված մարդը ամեն բան շուտ է տեսնում և շուտով ըմբռնում:

Այսօր թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ռուսաստանի առևտրական քաղաքները շատերում ուրիշ ուսումնարանների թւում կան և առևտրական ժամանակագրական ուսումնարաններ: Կովկասը, որը հարուստ է բերքերով և որը կարօտութիւն ունի հմուտ և զարգացած վաճառականների կանոնաւոր գործաւարտութիւնների, այսօր բոլորովին դուրի է այդպիսի մի կանոնաւոր մասնագիտական ուսումնարանից, առևտրական ուսումնարանից (коммерческое училище).

Մեր առևտրական գործերը մինչև այսօր ընթացել են նահապետական ձևով. Կովկասի վաճառականը մի ժամանակ աչող կերպով վարելով իր առևտրական գործերը, կարողացել է մի օրոշ

գումար ձեռք բերել. իսկ յետոյ չէ կարողանալով յարմարվել ժամանակի հոսանքին, յետ է մնացել, չէ կարողանում առևտրից նախկին օգուտներն ունենալ, այդ պատճառով իր անաշուղտութեամբ վերադարձ է ժամանակների վատութեանը. իսկ մինչ կասնել, որ առևտրականի անաշուղտութեան գլխաւոր պատճառն այն է, որ մեր վաճառականները ծանօթ չէ լուսաւորեալ աղբերի առևտրի սխալներին, չէ կարողանում ըմբռնել թէ՛ որոշք չէ զիտել մինչև անգամ կարգաւ օտար երկրից ստացված մի որ և է նամակ կամ ֆակտուրա, ծանօթ չէ որ տեղից և ինչ միջոցով փոխադրել կամ ստանալ իր ապրանքը, կամ ինչպէս արդիւնաբերել իր երկրի բերքը. այդպիսով չլուսնալով մրցման առաջն առնել, նա զանգուտվում է թէ ժամանակը վատ է: Ոչ թէ ժամանակն է վատ և անօգուտ, այլ վաճառականն ինքն է անգուտ և խաւար. ընդհակառակը, այժմ ժամանակն աւելի լաւ է և աւելի յարմարութիւններ կան այժմ:

Որովհետև մեր երկրի շահերը պահանջում են նախ որ առևտուրը կովկասի վաճառականների ձեռքից չանցնի օտարների ձեռքը, երկրորդ՝ երկրորդ և ժամանակը պահանջում են լուսաւորեալ և զարգացած առևտրականներ ունենալ ամեն մի ձեռքի համար, դրա համար անհրաժեշտ էր հինգեր կովկասի կենտրոնատեղում, Թիֆլիսում մի առևտրական ուսումնարան լինելու և ինչպէս արդիւնաբերել իր առևտրական գործերը, կարողացել է մի օրոշ

մեծացնել: Գիտարութիւնը մեր կարծիքով, ձեռնարկող և աշխատող անձինքների պակասութիւնն է: Մեր կարծիքով այդ գործի գլուխ բերելու հարցը մամուլի և ինտելիգենտ դասակարգի պարտաւորութիւնն է:

Խնդրեմ ասել, միթէ պատելի և սիրելի չէ, որ ամեն մեկ չբնապատող անհատ լինի զարգացած և լուսաւորված մարդ: Ապա ի՞նչ է մնում, ուրեմն սկսենք:

Բ. Արուստեանց

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Քանի մի օր առաջ Կ. Պօլսից եկող «ԱԼԵԿՏԱՆԴՐ Ի» շոգենաւը, նաւահանգիստը մտնելուն պէս քաղաքային բժիշկը յայտարարեց, որ մի-նիստութիւնից ստացված կարգադրութեան համաձայն, արգելում է ճանապարհորդներին շոգենաւից դուրս գալ և նշանակում է երեք օրվայ կարանտին շոգենաւի վրա: Բժիշկը իր այդ տեսակ մի միջոցի ձեռք առնելը բացատրեց նրա նով, որ շոգենաւի մէջ գտնվում են Մեքլայից և Պալեստինայից եկող 4—5 ճանապարհորդներ, իսկ այդ երկրներում ժամապատ կայ: Շոգենաւի մէջ կար նաև Նիուսադէմի ռուսաց հիւպատոսը, նա սկզբում էր, որ այդ տեղերում հիւանդութիւն չէր կայ և պահանջում էր ապառ թողնել շոգենաւը կարանտինից. բայց ոչ նրան, և ոչ էլ շոգենաւում գտնվող մի բժիշկին, որը հաստատում էր թէ շոգենաւում գտնվողները մէջ ոչ մի հիւանդութիւն չէր կայ, լսող չեղաւ: Համաձայն մեր ստացած վերջին տեղեկութիւնների, —ասեց բժիշկը—այդ տեղերում ոչ թէ միայն հիւանդութիւն կայ, այլ օրվայ մէջ մի քանի հարիւր հոգի մեռնում են ժամապատից: Ուստի շտապով կանչեց կապիտանին, և հրամայեց անմիջապէս շոգենաւը հեռացնել նաւահանգիստից և ենթարկել 3 օրվայ կարանտինի. կապիտանը հնազանդվեց. բարձրացրեց դեղին դրօշակը և շոգենաւը բաւական տարածութեան վրա հեռացրեց նաւահանգիստից: Շոգենաւի վրա ծխախոտ ծխելը արգելվեց: Հրամայեց վարակված տեղերից եկող ճանապարհորդների բոլոր իրեղենները լուսնալ և ենթարկել

կել դեղինֆէկցիայի: Նշանակվեցան մի քանի կօշակներ շոգենաւի վրա հսկելու, որ ոչինչ այնտեղից դուրս չը բերեն: Պատը նոյնպէս 3 օրից յետոյ պիտի տան: Մարտատան աստիճանաւորները մէկը շոգենաւը հասնելուն պէս ներս մտաւ այնտեղ. հրամայեց նրան ևս մինչև նշանակված ժամանակամիջոցի լրանալը դուրս չը թողնել:

Եւ այդպէս մի քանի մուգըխիւներ և հալիններ պատճառով, բազմաթիւ ճանապարհորդներ ստիպված են երեք օր ակամայից ծովի վրա մընալու:

Ա. Ապ.

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հինգշաբթի օր, հոկտեմբերի 3-ին Թիֆլիսի հայոց թատրոնական խումբը կը ներկայացնէ քաղաքային թատրոնում «Եվելինա» երիտասարդութիւն» պիեսն և մի վոգելիլ, նաւահանգիստը և Կովկասից թարգմանված: Ներկայացմանը կը մասնակցեն մեր հայոց թատրոնական խմբի ամենալաւ ոյժերը:

Մենք լսում ենք, որ Ֆրանսիական յայտնի վիպասան Ալֆօնս Դոդէի հեղինակած «Խոջընդոտ» չորս արարուածով կօմէդիան արդէն թարգմանված է հայերէն լեզուով և շուտով կը ստացուի: «Տարադ» պատկերազարդ շաբաթաթերթում մաս-մաս:

Լսում ենք, որ ռուս յայտնի գրող Տօլստոյի «Կրէյցերեան սոնատա» վերնագրով գրուածը թարգմանված է հայերէն լեզուով:

Կարսի նահանգի Բէզլի-Ամէդ հայոց գիւղի ուսումնարանի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը: «Մեր ուսումնարանը, չուսնալով բաւականաչափ նիւթական միջոցներ, չէ կարող իր սեփական զարգարանն ունենալ, ուստի դիմելով հայ խմբագիրներին, հրատարակելիներին, հեղինակներին և հարուստ անձանց, ուսումնարանի հոգաբարձութիւնը խնդրում է, որ գործին համակրող անձինք բարեհաճեն ուղարկել մեզ լրագիր, ամսագիր, գիրք կամ դրամ, որպէս զի կարողանայինք ապագայում կազմել մեր

ձեռքս դէպի նրա բնակարանի դրան դանգալը...

Էվելինա իմ աչքում աւելի էլ գեղեցկացել էր: Նա ընդունեց ինձ անսահման ուրախութեամբ, սակայն նրա վարմունքի մէջ նկատելի էին գործունեայ մարդու ձևեր... Նա երկար ժամանակ չէր նստում մի և նոյն բազմաթիւ վրա, ամեն րօպէ մտնում էր միւս սենեակը, ներդուրսէն էր խնդրում, որ շատ զբաղված է և կէս ժամից յետոյ պէտք է տանից դուրս գալ, վարվում էր ինձ հետ մասամբ ինչպէս մի երեխայի հետ, —առաջարկում էր ինձ քաղցրեղեններ, պատուիրում էր ինձ համար թէյ կամ կակաօ, ամեն րօպէ գնում էր խահաօ, խահաբարձուս պատուներն տալու համար, ամեն րօպէ նայում էր ծոցի ժամացույցի վրա...

—Աստուած կը սիրէք, Էվելինա, ասնք թէ դուք այստեղ զբաղված մարդ էք, իսկ ես, ընդհակառակն, արձակուրդներս վայելող մի աղաւթ ուսանող,—բայց դոնէ այդ կէս ժամը, որ կարող էք ինձ չնորհել, հանդիստ նստեցէք ձեր բազմաթիւ մէջ և ինձ վայելել տուեցէք ձեր ընկերութիւնը... Ինձ ոչ ձեր քաղցրեղենները, ոչ ձեր թէյն ու կակաօն են հետաքրքրում,—ինձ հարկաւոր է ձեզ տեսնել, ձեզ վրա նայել, ձեզ հետ խօսել, ձեր ձայնը լսել, ձեզանով զրաւելիլ...

—Բարեկամ, դուք կարծում էք որ մենք դեռ Յիւրիստին ենք... Այստեղ ես գիտադրապէս շատ զբաղված մարդ եմ...

—Ոչ, ես չեմ մոռանում որ Յիւրիստին չեմ և բնական եմ գտնում, որ այստեղ ձեզ մասամբ կերպարանաւորված եմ տեսնում... Բայց...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՎԵԼԻՆԱ

Հասաւ վերջապէս բաժանվելու րօպէն: Երկաթուղային կայարանի պլատֆորմի վրա կանգնած, տխուր քրտով սեղմում է ինք մինք իրար ձեռքերը, խոստանալով փոխադարձ անընդհատ նամակագրութեամբ պահպանել մեր սէրը:

—Իսկ միւս տարի, ձմեռվայ արձակուրդներին, ես դոնէ մի ամսով կը գամ Նիցցա, ձեզ տեսնելու համար, Էվելինա, ասեցի ես...

Նրա դէմքն անմիջապէս ընդունեց ուրախ և զուարթ արտայայտութիւն:

—Ա՛յ, որքան երջանիկ կը լինեմ ես, բացականչեց նա ուրախացած, միթէ դու ձգարիտ կը դաս Նիցցա...

—Դու... առաջին անգամն էր, որ նրա հրապարակ չըթուցներն արտասանում էին դու բառը խօսքը:

Ես ակամայ տարայ ձեռքս դէպի սիրտս. նա աստիկ էր բաբախում... Ա՛յ, ի՞նչի, մտածեցի ես, աւելի վաղ վայելել չը տուեցիր ինձ քո շրթունքներով արտասանած «դու» դիւթական բառը...

Յուզված սրտով սեղմեցի ես նրա ձեռքը և

յուզված ձայնով աւելացրի. «Իսկ երկու տարուց յետոյ, երբ ուսումն կաւարտեմ, ես քոնը կը լինեմ մինչև գերեզման»:

Հինգ րօպէից յետոյ դնացքը հեռանում էր արդէն, հետզհետէ հեռացնելով ինձանից և Էվելինային:

Մի ամբողջ տարի անցաւ. ես պարապում էի ամենամեծ եռանդով, իսկ իմ սէրը դէպի Էվելինա միշտ վառ էր պահպանվում իմ նրա հետ ունեցած անընդհատ նամակագրութեամբ: Օր չէր անցնում, որ ես նրանից նամակ չը ստանայի, որ չէր անցնում որ ես ինքս նրան նամակ չը գրէի...

Սակայն տարվայ վերջը, երբ ես արդէն պատրաստվում էի օգտվել ձմեռվայ արձակուրդներից և գոնէ մի ամսով հեռանալով սովորական զբաղմունքներից, այդ ամբողջ Էվելինայի հետ, Նիցցայում անցնելու,—նրա նամակները յանկարծ ըսկսեցին աւելի հազաւարելու դառնալ:

Հաղորդ ու մի ենթադրութիւններ երկար շարքով փոփոխապէս յայտնվում և անհետանում էին ուղեղիս մէջ... Ես անդադար հարցնում էի նրան իմ նամակներում նրա նամակների հազաւարելու դառնալու պատճառի մասին, բայց միշտ մի և նոյն պատասխան էի ստանում, որը ինձ թվում էր ոչ անկեղծ և խուսափող: «Ո՞րքան մեղաւոր եմ ես ձեր առջև, անգին բարեկամ, որ այժմ ստիպված եմ ուշ ուշ գրել ձեզ, սակայն դուք անշուշտ ներող կը լինէք, նկատի առնելով իմ անընդհատ զբաղմունքներս. այժմ դասերս աւելա-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊԵՏԵՐԲՈՐԳՈՒՄ աւարտած և վկայական ստացած տիկին Շուշանիկ ԵՒԱՆ-
ԳՈՒԼԵԱՆ տալիս է Բագու քաղաքում ԿԱՐ ու ՁԵՒԻ դասեր, մատչելի գներով,
ԳԼՕԳԻՆՍԿՈՒ մեթոդով, թէ իր մօտ և թէ տներում:
Հասցեն. ԲԱԳՈՒ, Պարապետ, տուն Լալայեանցի:

3—5

Մի քաջ ԳԱՂՂԻԱԿԻՏ և ՀԱՅԱԳԻՏ ուսուցիչ և հաշվապահ, թէ դիպրով, մեզ-
ւի և թէ գոհացուցիչ վկայականի արժանացած՝ մշտական փափագում է դաս աւան-
դել դաղղիներէն, հայերէնի և հաշվապահութեան և զրազիր լինել վաճառատներում
ձեռնառու պայմանօք, գիտենալով իսկ խտրելէն և տաճիկերէն:

Յանկացողք իրենց հասցեն հաճեն ուղարկել խմբագրատուն:

1—10

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՅ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գօրծինսկի
պրօսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր
կահաւորված սենեակներ, օրը 60 կո-
պէկից մինչև 5 ռուբլի: ամսով մեծ
դիմում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ
проспектѣ. Изящно и чисто меблирован-
ные номера отъ 60 коп. до 5 руб.
въ сутки; помѣсячно большая услуга.

Пища свѣжая и вкусная.

18—36

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱԽԻ ԷՍԷՆՑԻԱ

Յայտնի իր արտակարգ ար-
ժանաւորութիւններով ԻՍԿԱԿԱՆ ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱԽԻ ԷՍԷՆՑԻԱ
մինչև այժմ մնում է ամենալաւ, ամենաօգտակար և ամենահամովը և կը մնայ էլ ա-
պագայում:

Իսկ աչքեր առջ ունենալով նրա բազմաթիւ կեղծումներ, պէտք է ի նկատի ու-
նենալ առնողների շահերին հակառակ նպատակներ և գնելով ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱԽԻ
ԷՍԷՆՑԻԱՆ զգուշանար այդ ԱՌՈՂՋ և ՀԱՄՈՎ ներթի փոխարէն չը ստանալու փայտից
հանած, խիստ ջրախառն մի թիւը, որը լաւ քաջախին ոչ յատուկ անխորժ համ
ունի:

Պահանջել ոչ թէ միայն ֆիրմայի ԷՏԻԿԵՏ սրուակի վրա, Բ. ԿԵՕԼԵՐԻ ստորա-
գրութեամբ, բայց և անպատճառ ֆիրմայի ՊԼՕՄԲԱՆ, որը կախված է խցանի միջով
անցկացրած թելի վրա:

Ծախվում է գաւառներում ամենալաւ մազաղիններում:

4—5 (№ 1)

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)

(ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ԱՌԱՋԻՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՀԱՆՐԵՊ, ՄԴԻՎԱՆԻ ՏԱՆԸ)
Ստացել ենք ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ մարդկանց և երեխաների աշխատ և ձմեռվայ
ամենավերջին ձևի պատրաստի հագուստներ, պատրաստված՝ մեր անմիջական հսկո-
ղութեամբ՝ Մօսկվայում, սեփական արհեստանոցում:
ԳՆԵՐԸ էժան են և ամենքին մատչելի:

Խուզավերդեանց. 5—15

ПАРФЮМЕРІЯ
ВІКТОРІА РЕТІНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.

ДУХИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИКСКОРОНАКЪ И ВІОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ.

Въ Высочайше утвержденномъ Канваз-
скомъ Товариществѣ торговли апте-
карскими товарами въ Тифлисѣ
и Баку.

ПАРФЮМЕРІЯ
ЧІСЛОПІ-ԳԵԳԻՆԱ
ՕԼԵՈ-ՎԱԶԵԼԻՆԻԱՆ ՍՏԱՐԸ

РОЗУ-ԿՕՆԳՕ
ՎԱՄՈՐՈՆԱԿՈՒՆԵՐ
ՕԴԵԿՕԼՕՆ ԵՒ ՎԻՈԼԵՏ

ՉԱՆԿՕԼՕՆ ԵՒ ՐՕՅԱԼ
ՕՂԵԼՕՐԸ, ՃԱՂԿՏԻՔ
ՉԱՆԿՕՐԾԱԿԱՆ ԱՊԿՐԱՅՆԵՐԻ ՎԱՃԱՌԱՆ
ԲԱՐՃԱՊՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԿՈՎԿԱՆԵԱՆ
ՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՋՁ ԹԻՖԼԻՍԸ
և Բագու:
16—50 (5)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող
Իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշարարու-
թիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/0-ից մինչև 120/0
վաճառվում է եղբարց Ծովանշիների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ.
Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Ма-
нуэляницъ.

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին գիշում կը լինի:

17—150

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Հայոց եկեղեցական-ճխական դպրոցների համար հետևեալ դասագրքերը՝

1) Ս. Մախառանց՝ Գրաբարի հոլով, խոնարհ. և նախդ.	25
2) Ս. Մանդինան՝ Հինգիլի բացատր. ուսուցիչ. համար	30
3) Նախառու մանկավարժութիւն	1. ր. 50
4) Տէր-Ստեփանիան՝ Սկզբունք քր. հաւատոյ	60
5) Կոստանիան՝ Ծաղկաբաղ. շրջան Ա.	25
6) Նախառու մանկավարժութիւն	60
7) Նախառու մանկավարժութիւն	40
8) Նախառու մանկավարժութիւն	25
9) Եղիշէ ըստ անձնացեաց օրինակի	80
10) Սիմօնիան՝ ախարհագրութիւն, մ. ընակ.	60
11) Նախառու մանկավարժութիւն	60
12) Վարձիկան՝ Գասաղիք թուրքաբանութեան	70
13) Գ. Երզնկեանց՝ Թուրք. խնդիրներ և օրինակներ տարրական դասընթացը ա. և բ. տարի	30
14) Տէր-Սարգսեան՝ Վայկէլադ. դասաւանդ. եղանակը	20
15) Աղանեան՝ Կրօնի դասագիրքը, երկրորդ տարի	25
16) Նախառու մանկավարժութիւն	25
17) Երզնկեան՝ Գասաղիք ճանապարհական	60
18) Սիմօնեանց Պ. Սրբազան պատմ. հ. կտակ.—գ.	50
19) Սահակեանց Ս. Ք. Սրբազան պատմ. Հին-Ուխտի	40
20) Захаровъ, Сборн. примѣр. для писемъ. исчислен.	20
21) Նախառու մանկավարժութիւն	20
22) Мартыновскій, Русскіе писатели въ выборѣ и обработкѣ для школѣ. Томъ I.	1 p. 25
23) Նախառու մանկավարժութիւն	25
24) Вересовъ, Рисование по сѣткѣ для самостоятельн. занятій дѣтей въ школѣ и дома.	20
25) Теръ-Давтянцъ, Русск. сл. Рук. для Арм. уч. Г. I и II	50
26) Теръ-Акопянцъ, Начальная книжка Русск. языкъ. для Армянскихъ учил. Годъ I, II и III	45
27) Նախառու մանկավարժութիւն	60

5—5 (Հ.)

ԾԽԱՌՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՕԶԱՐՁԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յարգելի հասարակութեան ուղարկութեանն եմ առաջարկում իմ ֆարթի-
կայում ամենալաւ ֆրանսիական թղթից պատրաստվող

ԳԻՋԱՆԵՐԸ առանց սօսինձի:

Այդ գիրքները պատրաստվում են իմ ֆարթիկայում նորերս ստացված
ամենանոր սիւստմի ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ:

Պապիրոսներ գործածողները միշտ կարող են ունենալ այդ տեսակ գիրքա-
ներից ամեն տեսակ ծխախոտի և ամեն գների պապիրոսներ, որոնք արդէն
վաճառվում են աճաղին քանակութեամբ:

Նոր է ստացված ամենալաւ յատկութեան և թարմ

ԹԻՒՐԻՔԱՅ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ծխախոտ:

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս և ճիշ-
կերպով:

4—10

Ը. կարգի մի ՎԱՐԺՈՒՀԻ կամենում է տեղ ունենալ հայ դպրոցներում: Հա-
մաձայն է գնալ ուրիշ թեմ: Հասցեն Մշակի՝ խմբագրատանը:

4—5

ՎՐԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ, յայտնելով հայոց պարբե-
րական թերթերի խմբագրութիւններին և հայ գրքերի հրատարակիչներին, որ ներկա
տարվայ հոկտեմբերի 1-ից ընկերութիւնը ընդունելու է Ալեքսանդրեան այգում գտնվ
իր սեփական գրականութեամբ վաճառելու համար հայերէն հրատարակութիւններ, խն
րում է ցանկացողներին ուղարկել յիշեալ գրականութիւնը իրանց գրքերը և պարբերակ
հրատարակութիւնները: Պայմանների մասին տեղեկանալ գրականութի կառավարչից:

3—3

Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ
ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր
ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՆՈՑՆԵՐ,
ՊԷՆՏԵՆՆԵՐ և ԼՕՐԵՆՏԵՆԻ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՕ-
ԿԼԵՆԻ, ՁԵՐՄԱՋԱԳԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և
թէ վանանների համար: Վերաստուգված և վկայական ունեցող
ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր: Լօրենտի և պէնանէի համար ոսկեայ,
արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մի-
տալական թելեր:

Ակոցներ և պէնանէներ տրվում են նմանապէս բժշկների
պատուէրով:
Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի
նորոգելը և ապագիների գնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:

26—50 (5)